

ԼՍՈՂԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ

Նաիրա Գասպարյան, Մարիամ Խաժակյան
Երևանի պետական համալսարան

Հոդվածը նպատակ ունի վեր հանել խնդիրներ, որոնց հաճախ բախվում են թե՛ դասավանդողները, և թե՛ սովորողները ուսումնառության ընթացքում: Առաջարկվում է վարժությունների որոշակի համակարգ, որոնց օգնությամբ կարելի է հաղթահարել բազում այն դժվարությունները, որոնց կամա թե ակամա առերեսվում են սովորողները:

Բանալի բառեր. հաղորդակցական հմտություններ, լսողական հմտություններ, շեշտ, ռիթմ, հնչերանգ, համակարգիչ, համացանց:

Ներածություն

Ուսանողների հետ շփումն, անկասկած, հաճելի գործընթաց է: Դասավանդողը ուսանողին փոխանցում է իր կենսափորձն ու գիտելիքը, իսկ ուսանողը փոխադարձաբար՝ իր երիտասարդական ավյունն ու եռանդը: Առաջին իսկ հանդիպումը կանխորոշում է հարաբերությունների հետագա ընթացքը: Միջանձնային հարաբերությունների ճիշտ կառուցումը, առողջ փոխհարաբերություններն, անշուշտ, հետագա հաջողության կարևոր գրավակն են:

Դժվար է չհամաձայնել, որ ուսուցման գործընթացում բառերի ոճական առանձնահատկությունների, քերականական կապակցելիության, հնչյունական միավորների իմացությունը առանձնապես կարևոր է: Սակայն նույնիսկ այս դեպքում, և անգամ մայրենի լեզվի պարագայում միշտ չէ և բոլորին չէ, որ հաջողվում է գիտելիքը վստահորեն արտահայտել, խոսքը տրամաբանորեն կառուցել և ցանկալի արդյունքի հասնել: Սա հատկապես պայմանավորված է այն հանգամանքով, որ այն, ինչ սովորում են դասերի ընթացքում, բավականին հեռու է կենդանի ու իրական խոսք լինելուց: Անհրաժեշտ է խթանել սովորողի՝ սեփական մտքերն արտահայտելու հմտությունների զարգացումը:

Հաղորդակցական հմտությունների խնդիրը ներկայումս խիստ արդիական է: Ուսուցանողը սովորաբար գնահատում է սովորողի ընկալումն ըստ պատասխանների ճշտության: Արդյունքի վրա անհրաժեշտ է կենտրոնանալ անուղղակիորեն՝ փորձելով գտնել թերությունները շտկելու լավագույն և աննկատ միջոցները: Պետք չէ ուսանողին *կոտրել*, ասելով, թե նրա մոտ ոչինչ չի ստացվի: Ընդհակառակը, նրան հուսադրելով, կարելի է հասնել զգա-

լի արդյունքների: Այն պահին, երբ սովորողը գործնականում կիրառում է իր գիտելիքները, հաջողությունն արդեն իսկ ապահովված է:

Ինչպես նշում է Բաբխա Թյագին, լսողական ընկալումն իրականացվում է հինգ փուլով՝ լսել, հասկանալ, հիշել, գնահատել և պատասխանել: Նախ՝ լսելիս անհրաժեշտ է կարողանալ կենտրոնացնել ուշադրությունը: Այնուհետև՝ հաջող հաղորդակցության համար կարևոր է, որ լսողը հասկանա ուղերձը: Սրան հաջորդում է հիշելու գործընթացը: Այս փուլում ոչ միայն լսում ու մեկնաբանում են լսածը, այլև կուտակում են այն հիշողության պահեստարանում: Թեև կարևոր է նաև այն փաստը, որ երբեմն այն, ինչ հիշվում է, կարող է միանգամայն տարբեր լինել լսածից: Գնահատման փուլին մասնակցում են միայն ակտիվ լսողները, որոնք կշռադատում ու տեսակավորում են փաստերը և որոշում, թե արդյոք ուղերձում կողմնակալություն, կանխակալ կարծիք, նախատրամադրվածություն կա⁶: Միայն վերջին փուլում՝ պատասխանելիս է, որ պարզ է դառնում որքանով է ուղերձը ծառայել իր նպատակին: Սրա ապացույցը լսողի արձագանքն է (Tyagi 2013): Նշված հանգամանքները հաշվի առնելով՝ անհրաժեշտ է սովորողների լսողական հմտությունների զարգացումը այնպես կազմակերպել, որ նշված ոչ ակտիվ փուլերի ընթացքում սովորողը կարողանա ուշադրությունը առավելագույնս կենտրոնացնել նյութի վրա: Այդ իսկ պատճառով չափազանց կարևոր է, որ լսողական վարժությունները կազմակերպվեն նախ ծանոթ նյութի վրա, ապա՝ անծանոթ, որը սակայն կարող է հետաքրքրել սովորողին: Կարևոր հանգամանքներից է նաև այն, որ սովորողը չձանձրանա նյութի երկարաձգվածությունից կամ դժվարությունից: Տեխնիկական միջոցների կիրառումը լուծում է բազմաթիվ հարցեր:

Ժամանակակից լեզվական կրթության զարգացման բարդությունն ու դինամիզմը թե՛ սովորողների և թե՛ դասավանդողների առաջ նոր պահանջներ են դնում (Гальскова; Гез 2006): Հատկապես այն դեպքում, երբ չկա լեզվական միջավայր, առանձնահատուկ կարևորություն է ստանում լսողական հմտությունների զարգացումը և այստեղ է, որ օգնության են հասնում տեխնիկայի նորագույն միջոցները, մասնավորապես՝ համակարգիչը, տեսաերիզները, համացանցը, որոնց օգտագործումը պարզապես դառնում է անհրաժեշտություն և ամենալայն հնարավորություններն է ընձեռում սովորողներին ու դասավանդողներին: Վերջին տարիներին, տեղեկատվական տեխնալոգիաների օգտագործման հարցը մեծ կարևորություն է ստացել հատկապես օտար լեզուների ուսուցման գործընթացում: Սկզբում պետք է ուշադրությունը կենտրոնացնել ոչ թե վերջնական արդյունքի, այլև սովորելու գործընթացի վրա: Իսկ հաջողությունն ապահովելու համար դասավանդողը, հենվելով գոյություն ունեցող դասական մեթոդների վրա, պետք է մշակի դասավանդման նոր ձևեր, մեթոդներ, մոտեցումներ, որոնք կհամապատասխանեցվեն իր լսարանին: Կարելի է, օրի-

նակ, փոքրիկ բեմականացում դիտել՝ ձայնը անջատած և հանձնարարել ուսանողներին կռահել, թե ինչի մասին էր ներկայացումը: Ամեն մեկը ներկայացնում է իր տեսակետը: Այնուհետև դիտում են ձայնային տարբերակը: Այս անգամ դասավանդողը փորձում պարզաբանել, թե արդյոք արդարացված են ուսանողների ակնկալիքները: Յանկալի արդյունքի հասնելու համար ամենափոքր հաղթանակն իսկ պետք է խրախուսվի դասավանդողի կողմից:

Եթե լսողական գործընթացը նպատակային է, ապա այն ավելի արդյունավետ է: Ըստ Սթիվեն Բրաունի, նախկինում որոշակի նյութ լսելուց հետո բավարարվում էին ընդամենը մի քանի հարցով: Այդ մեթոդն այնքան էլ արդյունավետ չէր, քանի որ սովորողներն անգամ պատկերացում չունեին, թե ինչ են պատրաստվում լսել, բացառությամբ, իհարկե միայն այն դեպքերի, երբ հարցերը նախապես էին ձևակերպվում և այն էլ շատ քչերի կողմից (Brown 2006): Փրաբհուն (Prabhu 1987) կարևորում է սպասված արդյունքին քայլ առ քայլ հասնելու ռազմավարությունը, իսկ Սկեհանը (Skehan 1996) գտնում է, որ հիմնական շեշտը պետք է դրվի առաջադրանքի ընդհանուր ճանաչողական կողմի և/կամ լեզվական գործոնի վրա:

Լսողական հմտությունները զարգացնող վարժությունների համակարգ՝ պարզից բարդ սկզբունքով

Լսելու գործընթացը շատ ավելի արդյունավետ կլինի, եթե սովորողները նախապես իմանան, թե որն է դրա նպատակը: Երբեմն կարելի է լսել պարզապես *նյութի մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար*: Բայց, եթե որևէ տեղ ենք պատրաստվում գնալ և ճանապարհն ենք հարցնում, պարզապես ընդհանուր պատկերացումն այս իրադրության մեջ, իր նպատակին չի ծառայի: Լսելու կարևորագույն նպատակներից է *եզրահանգումներ կատարելը*: Երբեմն լինում են իրադրություններ, երբ խոսողն ուղղակիորեն չի ասում այն, ինչ ի նկատի ունի: Լսողը պետք է չափազանց ուշադիր լինի, որպեսզի հասկանա, թե ինչ է ակնարկվում անուղղակիորեն, այսինքն՝ նա պետք է փորձի բացահայտել *քողարկված իմաստը*: Դիտարկենք հետևյալ օրինակը՝

Woman: *We're going out to dinner after class. Do you want to come, too?*

Man: *Maybe. Where are you going?*

Woman: *Pizza King.*

Man: *Pizza? I love pizza!*

Այս օրինակը կարելի է մեկնաբանել երկու կերպ՝ կախված խոսքային իրադրությունից: Նախ՝ խոսակիցը պարզապես փաստում է այն, որ սիրում է պիցա, կամ էլ անուղղակիորեն ակնարկում է, որ ուզում է միանալ նրանց:

Լսողական հմտություններ զարգացնելու մեթոդները շատ են, անհրաժեշտ է պարզապես մշակել ճիշտ ռազմավարություն և, պարբերաբար անդրադառնալով դասի հիմնական նպատակներին, ընտրել ամենաարդյունավետ եղանակները: Կարևոր է տվյալ իրադրության մեջ կարողանալ տարբերակել գլխավորը երկրորդականից՝ լսել և ընդհանուր պատկերացում կազմել, լսել և ներկայացնել մանրամասները, թե՞ լսել ու եզրահանգումներ կատարել: Երբ սովորողին հայտնի է նպատակը, արդյունքն, անկասկած, գոհացուցիչ է (Mally and Chamot 1990): Եթե սովորողները գիտեն, թե ինչ են լսում, կարողանում են ավելի ճիշտ կենտրոնացնել ուշադրությունը: Իսկ դրա համար նախնական գիտելիք է անհրաժեշտ: Եթե դասավանդողը ճիշտ կառուցի լսողական առաջադրանքները, դրանով նա կապահովի նաև խոսքի գործընթացը: Իսկ խոսելու գործընթացն իր հերթին հնարավորություն է տալիս լսել միմյանց: Այս եղանակով ձեռք բերված գիտելիքներն աննկատ վերածվում են հմտությունների:

Սակայն, նախքան համակարգչին անցնելը անհրաժեշտ է մշակել վարժությունների որոշակի համակարգ, որոնց շնորհիվ դժվարություններն առավել հաղթահարելի կլինեն:

Շատ օգտակար են այնպիսի վարժությունները, որտեղ անհրաժեշտ է տարբերակել բառերը մեկ հնչյունի տարբերությամբ, օրինակ՝

Which is the speaker saying? Underline the right word in each pair.

post/boast

sick/thick

still/steal

կամ՝

The mop/mob fell on him.

What a beautiful golden peach/beach!

Is that the vine/wine you were telling me about?

Վարժությունների համակարգը անհրաժեշտ է աստիճանաբար բարդացնել, որպեսզի սովորողները ևս դրական տեղաշարժ զգան և այն, ինչ պարտավոր են անել, սիրով անեն:

Listen to the short dialogues and fill in the missing words. Then say the sentences aloud.

Օրինակ՝ *These ... are Why ... you ... them? (These trousers are too tight. Why don't you try them.)*

... answer the I ... you (Don't answer the telephone until I tell you to.)

Սկզբում, իհարկե, արդյունքները կարող են բավականին զվարճալի լինել: Դա ևս կարող է դրական խթան հանդիսանալ:

Բավականին օգտակար են նաև շուտասելուկները, որովհետև սկզբում դրանք սովորողներին անհաղթահարելի են թվում, իսկ երբ ստացվում է և այն էլ շատ լավ, նրանք ինքնավստահություն են ձեռք բերում, հավատ սեփական ուժերի նկատմամբ և թվում է, թե դրանից հետո ցանկացած դժվարություն կարելի է հաղթահարել:

Այսպես՝

Betty's prepared beautiful puff pastry for the blackberry and apple pie.

կամ՝

You'll never put a better bit of butter on your knife. (զյուղական կարագի գովազդ)

Այնուհետև աստիճանաբար անցնում ենք վարժությունների այն տիպին, որոնք ուղղված են կապակցված խոսքին և որոնց շնորհիվ խոսքն ավելի սահուն ու գեղեցիկ է հնչում:

Practice putting a [w] sound between a syllable ending in [u:], [əʊ], [aʊ], followed by another vowel. Remember, this happens even when the two syllables are in separate words.

going

poetical

go away

thou art a fool

Now I wonder how on earth we're going to plough our way through all this!

Խոսքի կենդանի հնչողությունն ապահովելու համար անհրաժեշտ է հիշել, որ գոյություն ունեն որոշ դերանունների, եղանակավոր բայերի, սպասարկու բառերի, օժանդակ բայերի և այլն ուժեղ և թույլ տարբերակներ: Օրինակ՝

can [kæn] – [kən] – [kn]

some [sʌm] – [səm]

as [æz] – [əz]

Երբեմն ռիթմիկ նկատառումներով բաց են թողնվում որոշ անշեշտ վանկեր՝

comfort – comf(or)table

vegetate – veg(e)table

Շեշտը, խոսքի տեմպը և հնչերանգը շատ կարևոր են հաղորդակցություն իրականացնելու համար: Մրանց միջոցով ևս կարելի է տարբերակել գլխավոր և եկրորդական մտքերը: Շեշտի միջոցով ընդգծվում են հենակետային բառե-

որը, դանդաղ տեմպով ներմուծվում են կարևոր մտքերը, իսկ արագ տեմպով՝ արդեն ծանոթ տեղեկատվությունը:

Հնչերանգը այն միջոցներից է, որով խոսողը ազդանշան է ուղարկում խոսակցին: իսկ ի՞նչ է կատարվում, երբ այդ ազդանշանը լսողի կողմից միանգամայն այլ մեկնաբանություն է ստանում: Ի՞նչ է կատարվում, երբ ոչ լեզվակիրը ոչ համապատասխան հնչերանգ է օգտագործում: Երբեմն որոշ արտասանական, քերականական կամ բառային սխալներ, որոնք չեն աղավաղում ասույթի միտքը, լեզվակիրների կողմից կարող են ճշգրիտ կերպով ընկալվել, սխալ հնչերանգը, սակայն, կարող է աղավաղել ուղերձը և հասցեատիրոջը հասնել միանգամայն այլ բովանդակությամբ: Օրինակ՝

You 'haven't done your, homework.

-I, have.

-I, have.

Առաջին օրինակում, ի պատասխան դասավանդողի այն հայտարարության, թե սովորողը չի կատարել տնային աշխատանքը, վերջինս պատասխանում է, որ կատարել է՝ ասես միայն արձանագրելով փաստը, իսկ երկրորդ պատասխանում, որտեղ ընդամենը վարընթաց տոնը փոխարինվել է վերընթաց տոնով, առկա է ակնհայտ գայրույթ, որով սովորողը հերքում է այդ իրողությունը:

Միևնույն հնչերանգը որոշակի համատեքստում և դրանից դուրս միանգամայն այլ կերպ է ընկալվում: Այսինքն՝ խոսողն իր ասելիքը ձևավորում է միայն որոշակի իրադրությունից ելնելով: Ինչպես նշում է Ն. Ի. Ժինկինը, հնչերանգով կարելի է վերականգնել իրադրությունը, իսկ իրադրության միջոցով՝ գտնել հնչերանգը (Жинкин 1998):

Տեղեկատվության լիարժեք ընկալման համար հնչերանգի ուսուցումն սկսում են համեմատաբար փոքր միավորներից՝ կարճ երկխոսություններից, փոքրածավալ տեքստերից՝ աստիճանաբար բարդացնելով դրանք և մեծացնելով ծավալը:

Դադարները ևս իրացնում են իմաստատարբերակիչ գործառույթ և կարող են փոխել ասելիքի իմաստը, օրինակ՝

I got up, quickly got dressed, and went downstairs.

Ես վեր կացա, արագ հագնվեցի և իջա ներքև:

I got up quickly, got dressed, and went downstairs.

Ես արագ վեր կացա, հագնվեցի և իջա ներքև:

Հայտնի փաստ է նաև այն, որ որոշ բառեր, կախված շեշտի դիրքից, փոխում են խոսքիմասային պատկանելությունը, այսպես՝

1. *We expect an **increase** of work next week.*

2. *Their numbers continue to **increase**.*

3. *A rebel fights against existing authority.*

4. *We must rebel against these stupid conventions.*

Առաջին և երրորդ օրինակներում *increase* և *rebel* բառերը գոյականներ են, իսկ երկրորդ և չորրորդ օրինակներում՝ բայեր:

Երբեմն անհնար է տարբերել բառիմաստն ըստ արտասանության, այստեղ մեզ օգնության է գալիս այն համատեքստը, որում գործածվում է բառը, օրինակ՝

He was heard badly. Նրան վատ էին լսում/նրա ձայնը վատ էր լսվում:

He was hurt badly. Նա վատ/ահավոր վնասվել էր:

Can I have some more ice? Կարելի՞ է էլի պաղպաղակ ուտել:

Can I have some more rice? Կարելի՞ է էլի բրինձ ուտել:

grey tapes մոխրագույն երիզներ – *great apes* մեծ մարդանման կապիկներ

send the maid ուղարկեց աղախնին – *send them aid* նրանց օգնություն ուղարկեց

it's an aim դա նպատակ է – *it's a name* դա անուն է

grade 'A' ամենաբարձր գնահատական – *grey day* մռայլ օր

ice train սառցե գնացք – *eye strain* աչքի լարվածություն

Հարկավոր է ուշադրությունը կենտրոնացնել հատկապես այն սխալների վրա, որոնք աղավաղում են խոսքի իմաստը՝ դժվարացնելով ընկալման գործընթացը: Սովորողի համար անհրաժեշտ է դասը տոնի վերածել: Մենք պետք է հնարավորինս շատ խոսքային իրադրություններ ստեղծենք սովորողի համար, որպեսզի զարգացնենք լսողությունը՝ կարևորագույն հմտություններից մեկը: Օրինակ, կարելի է թեմատիկ դասեր անցկացնել նաև լսարանից դուրս՝ այցելելով տարբեր մշակութային վայրեր՝ թանգարան, համերգ, թատրոն, կինո, սրճարան, այս ամենի մասին դասախոսություններ լսել համացանցից և սկսելով քննարկումներ անցկացնել: Անհրաժեշտ է, որ սովորողները միմյանց հետ հաղորդակցվեն ուսուցանվող լեզվով: Աստիճանաբար հարկավոր է մեծացնել նրանց հետաքրքրությունների շրջանակը՝ նախապատրաստելով ավելի բարդ աշխատանքների: Կարելի է լսել դասախոսություններ ամենատարբեր թեմաներով, անգամ այնպիսի, որոնց շրջանակներում սովորողներն ունեն սահմանափակ գիտելիքներ, կամ էլ ներկայացվում է բոլորովին անծանոթ նյութ: Նյուտոնն (Newton 2001), օրինակ, առաջարկում է նյութին ծանոթանալուց առաջ անծանոթ բառերի վրա սովորողի ուշադրությունը հրավիրելու երեք եղանակ՝ կռահել իմաստը, տեղում մի քանիսին հանձնարարել փնտրել այն հեռախոսների մեջ ներքեռնված բառարաններում, կամ էլ ներկայացնել նոր բառերի որոշակի քանակ և բացատրություններ՝ առաջարկելով համապատասխանեցնել դրանք: Այնուհետև կարող են լսել տեքստը փոքր հատվածներով, մինչև հասկանան հիմնական միտքը: Կարելի է կեսից անջա-

տել ձայնագրությունը, իսկ սովորողները փորձեն կռահել, թե ինչ է ասվելու հետո: Այս ձևով զարգանում է նրանց ստեղծագործ միտքն ու վերլուծական մտածողությունը: Սովորողը պետք է նախապես ծանոթ լինի իրեն ներկայացվող տեքստի, ելույթի կառուցվածքին՝ մուտք, հիմնական շարադրանք, եզրակացություն: Նա աստիճանաբար սովորում է տարբերակել գլխավորը երկրորդականից (շեղում թեմայից, որևէ հումորային պատմություն և այլն), գտնել պատճառահետևանքային կապը, համեմատել տարբեր երևույթներ, պարզել, թե ինչ նպատակ է հետապնդվում: Հարց ու պատասխանի ժամանակ անհրաժեշտ է կենտրոնանալ բուն նյութի վրա, որին կնպաստեն նախապես արված գրառումները: Հուշող բառերի ու արտահայտությունների օգնությամբ կարելի է տարբերակել կարծիքը (*I think, it appears that, it is thought that*), տեսությունը (*in theory*), հետևությունը (*therefore, then*) և այլն: Դասավանդողը նախապես պետք է ներկայացնի այն կարևոր բառերն ու արտահայտությունները, որոնց օգնությամբ սովորողը կկարողանա հստակ կողմնորոշվել, թե տարբեր մտքերի միջև ինչպիսի կապ է իրացվում՝ պատճառ (*because, since*), հետևանք (*as a result, so, therefore, thus, consequently*), օրինակ (*for example, such as*), համեմատություն (*in contrast, than*), հակադիր միտք (*on the other hand, however*), հավելյալ մտքի ներմուծում (*furthermore, moreover, besides*), նույնատիպ գաղափարի ներմուծում (*similarly, likewise*), նույն մտքի վերաձևակերպում (*in other words, that is*), եզրակացություն (*in conclusion, in summary*): Տեղեկատվության ընկալման հարցում, ինչպես արդեն նշել ենք, կարևորագույն դեր ունի հնչերանգը, որի միջոցով ընդգծվում է ներմուծվող գաղափարի կարևորությունը: Դադարներով առանձնացվում են տարբեր մտքերը, որի շնորհիվ էլ ընկալման գործընթացը հեշտանում է, բազմիցս կրկնվում են հենակետային բառերը, նույն տեղեկատվությունը այլ կերպ է ձևակերպվում, արտաբերվում է բարձր, հստակ ու ընդգծված ձայնով: Սա այն կարևորագույն տեղեկատվությունն է, որը սովորողին կօգնի լիարժեք կերպով ընկալել և յուրացնել լսած նյութը և անհրաժեշտության դեպքում հմտորեն կիրառել այն:

Եզրակացություն

Այսօր համացանցը լայն հնարավորություններ է ստեղծել սովորողների համար: Դասերին առնչվող բոլոր թեմաների մասին հրաշալի նյութեր կան համացանցում, որոնց հնչող տարբերակները կարելի է լսել ամենատարբեր հեղինակավոր կայքերից: Լայն հնարավորություններ են բացվել նաև լսելու աշխարհի լավագույն մասնագետների՝ ամենատարբեր բնագավառների առնչվող խոսքը, որն, իհարկե, ներկա սերնդի առավելությունն է: Այսպիսով, որքան հետաքրքիր ու հագեցած լինի դասավանդման գործընթացը, այնքան ավելի դրական կլինի սովորողների արձագանքը, այնքան ավելի մեծ կլինի

նրանց ներգրավվածությունը ուսուցման գործընթացին, իսկ արդյունքները գոհացուցիչ կլինեն երկուստեք՝ թե՛ դասավանդողի և թե՛ սովորողի համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Օրինակները վերցրել ենք Hancock Mark *English Pronunciation in Use*, Kelly Gerald *How to Teach Pronunciation*, Ponsonby Mimi *How Now, Brown Cow?* գրքերից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Brown, S. (2006) *Teaching Listening*. Available at: <C:/Users/User/Desktop /Brown-Teaching-Listening.pdf> [Accessed December 2015].
2. Hancock, M. (2003) *English Pronunciation in Use*. Cambridge: CUP.
3. Kelly, G. (2000) *How to Teach Pronunciation*. London: Pearson Education Limited.
4. Newton, J. (2001) *Options for Vocabulary Learning through Communication Tasks*. // *ELT Journal* 55, pp. 30-37.
5. Nunan, D. (1987) *Communicative Language Teaching: Making it Work*. // *ELT Journal* 41, pp. 136-45.
6. O'Malley, J. and Chamot, A. (1990) *Learning Strategies in Second Language Acquisition*. Cambridge: CUP.
7. Ponsonby, M. (1998) *How Now, Brown Cow?: A Course in the Pronunciation of English with Exercises and Dialogues*. Publisher: Prentice-Hall International.
8. Prabhu, N.S. (1987) *Second Language Pedagogy*. Oxford: OUP.
9. Skehan, P. (1996) *A Framework for the Implementation of Task-Based Instruction*. // *Applied Linguistics* 17, pp. 38-62.
10. Tyagi, B. (2013) *Listening: An Important Skill and Its Various Aspects*. // *The Criterion*. / *An International Journal in English*. Available at: <<http://www.the-criterion.com/V4/n1/Babita.pdf>> [Accessed March 2016].
11. Underhill, A. (1998) *Sound Foundations*. Heinemann: Macmillan Publishers Limited.
12. Yuan, F. and Ellis, R. (2003) *The Effects of Pre-Task Planning and On-Line Planning on Fluency, Complexity and Accuracy in Monologic L2 Oral Production*. // *Applied Linguistics* 24. Oxford: OUP.
13. Гальскова, Н.Д.; Гез, Н.И. (2006) *Теория обучения иностранным языкам. Лингводидактика и методика*. М.: Академия.

14. Жинкин, Н.И. (1998) *Психологические основы развития речи.* // Язык. Речь. Творчество. Москва.
15. Соловова, Е.Н. (2002) *Методика обучения иностранным языкам: Базовый курс лекций Пособие для студентов пед. вузов и учителей.* М.: Просвещение.

Developing Listening Skills by Means of the Computer

One of the main skills to be obtained in the teaching/learning process is listening. Its importance is conditioned by the fact that communication will fail if the communicators do not possess the mentioned skills. There are many means and aids to help develop and improve these skills, but the most important factor in this respect is the teacher whose role in class is indispensable, even in those cases when the class is student oriented.

Повышение навыков аудирования с помощью компьютерных средств

Упражнения и тесты на аудирование по английскому языку в классе при помощи новых технологий позволяют улучшить способность студентов воспринимать устную английскую речь на слух. Такие упражнения не только улучшают навыки понимания английской речи, но и дают им возможность ближе познакомиться с живым общением, выучить новые слова и выражения. Эти упражнения являются еще и познавательными, так как содержат в себе много интересной и новой информации.